

ԲԱՃԱՆԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 Ղրշ

Վեցամս. 25 "

ԱՐՏԱՍԱՀԱՐ


Տարեկ. 13 Քր

Վեցամս. 7 "

Ամերիկա

2 Տղ. 30 սէնդ

ԿԱՆԻՍԻ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ

չեն տրուիր

Շանուցումներ

մասնաւոր պայ

մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԱԶԳԱՅԻՆ . ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 20 ԿՐԱԿԻ 1904

ԹԻԻ 298

ԱԶԴ. — Հինգշաբթի առտու տպարանին մեքե-
նաներու յարկին տանիսը յանկարծ փլելուն պատճառաւ
թերթը ալօր կրցանք հրատարակել :

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ «ՀԱՅԵԼԻ»

Աղեփասնորիս

Սարաճիյէ, Կիլիկեան ճաշարանի բոյի քասաժին
մէջ:

ՏՊԱՐԱՆ. — Գիւրամտաշէլի գիներով կը տպագ-
րուին Հայերէն, Ֆրանսերէն, Արաբերէն, Անգլիերէն
և Յունարէն այցետուս, հասցէտուս, նամակագրուս,
պահարան, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, յայ-
տարարութիւններ, ևն:

ԳՐԱՏՈՒՆ. — Վաճառում և գնումն Դասական,
Գիտական, Վիպական և Թատերական գիրքերու:

Վաճառում և գնում՝ ամեն տեսակ նամակագրոշ-
մերու:

Վաճառումն Հայկական, Եգիպտական ու Եւրո-
պական գունաւոր և բազմատեսակ Գաւթ-Բօսթերու:

Վաճառումն գրական պատրաստուած թուղթ, գրիչ,
տետրակ, պահարան, մելան, ևն:

Կեդրոն բաժանորդագրութեան արտասահմանեան
Հայ թերթերու և հանդէսներու:

Հասցէ. — Տիրան Փաշիսպեան

Սարաճիյէ

Աղեփասնորի

ԱԶԳԱՅԻՆ

Վեհ. Հայրապետը Օրհնութեան Կոնդակ մը
գրկած է այս անգամ տեղւոյս Զէյթունի Բարե-
սնրացին:

Բրո-Արմէնիայի Մեծարոյ Խմբագիր Տ. Բի-
էն Քիլյան՝ որ տոբթ. Լօրիս Մէլիքոֆի հետ վեր-
ջերս Պուլիարեա անցած էր, փետր. 21ին Ֆիլի-
պէ հասեր ուր հայ հասարակութեան կողմէ ար-
ժանաւայել կերպով ընդունուեր է. Յարգելի
հիւրերը հոն երկու օր մնալէ վերջ Սօֆիայի ճամ-
բով վերադարձեր են Եւրոպա:

— Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի Տիկնանց Խը-
նամակալութիւնը որոշեր է Որբանոցի արհես-
տարանին արտագրութիւնները Ղալաթիոյ Ս.
Լուսաւորիչ եկեղեցիին կից շէնքին մէջ փոխա-
դրել տալով. հինգշաբթի օրերը իր հսկողութեա-
նը տակ վաճառել տալ զանոնք:

— Ս. Պատրիարքը՝ Զարին նոր խնդրագիր
մը պրելով, կրկնած է թէ՛ ուսս կառավարութիւ-
նը եկեղեցական կալուածները գրաւելով, բոլոր
հայոց իրաւունքներուն դէմ դործած է, ուստի
կը պահանջէ որ այդ օրէնքը չգործադրուի, հա-
կառակ պարտաւային՝ ազգը պիտի ստիպուի ուրիշ
տեղ փոխադրել կաթողիկոսական աթոռը:

— Տարիներէ ի վեր գիկտատարաբար Պուր-
րէշի մէջ թաղականութիւն ընող Դանիէլ Եռա-

քիմէսքօ անուն մարդը, զոր անցեալ տարի ծա-
նօթացուցած էինք մեր ընթերցողաց, այս ան-
գամ հրատարեցուցուած է իր պաշտօնէն, որով-
հետեւ դատարանը անիրաւ գտած է զայն՝ քոնի
մը Ռօտտսթոյի անմեղ հայեր աքսորել տուած
ըլլալուն համար:

—Կրօն. ժողովը իր վերջին նստին մէջ ո-
րոշեր է բաւ համարիլ Տ. Գէորգ քահանայ Հիւր-
միւղեանի մէկ տարուան փիլոնալիկութիւնը, և
հրահանգ տուեր է Փոխանորդարանին որ յիշեալ
քահանան Եգիպտոսէ զատ ուրիշ տեղ մը ղրկէ
քահանայադորձելու:

—Ծանօթ բարերարուհի Տիկին Եկտարինէ
Նատիրեանց այս անգամ ալ վանայ վարժարան-
ներուն 170 ոսկի նուիրած է:

—Թէեւ ռուս կառավարութիւնը գրաւած
կայուած ու դրամներու հասոյթէն ծախքի հա-
մար պէտք եղած զուժարը կուզէ եղեր տալ,
սակտյն փոխարէն այնպիսի ընկալագիր կը պա-
հանջէ որ ոչ կաթողիկոսը, ոչ առաջնորդները և
ոչ վանահայրերը կրնան ստորագրել: Առ այժմ
վար չեն գրուիր եղեր այն բարեպաշտակոննը-
ւէրները որոնք կը զրկուին վեհ. Հայրապետին,
որ կարելի եղածին չափ կը հոգայ զեղչուած ե-
մտացոյցի մը պահանջները:

—Բաճաւէր օգտաշատ ամսաթերթի խմ-
բագիր Տ. Կ. Պատմաճեան վերագարձած ըլլալով
Ռուսահայաստան ըրած ճամբորդութենէն, վեր-
սկսած է թերթին հրատարակութիւնը:

—Ուրախութեամբ ծանուցանելով թէ Մեծ
Յովհաննէս էֆ. Մաթոսեան Ն. Բ. Խտիվի կողմէ
այս անգամ Պէյութեան աստիճանի բարձրացած
է, կը փութանք շնորհաւորել Ազն. Պէյը՝ իրեն
եղած այս պատուոյն համար:

ՄԵՐ ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Երկու թիւ առաջ աւետեցինք Տիգրան Եր-
կաթ ժողովրդային Միութեան ընթերցարանի
բացումը. այժոյր ալ ուրախութեամբ կը ծանու-
ցանք թէ, յիշեալ ընթերցարանը ուր կը գտ-
նուին ամեն տեսակ թերթեր, հանդէսներ և ճոխ
մատենադարան մը, ունի նաև մասնաւոր սրահ-
ներ ժամանցի կամ զբօսներու համար:

Հոռաւոր, օղաւէտ և ընդարձակ վայր մ'է
մեր Մատենադարան-Ընթերցարանը, միանգա-
մայն սրճարան ալ է, ուր կարելի է երթալ օրը
մէկ քանի ժամ անցունել:

Սրահներու մաքրութիւնը և սպասարկու-
թիւնը մեծ առաւելութիւններ կը ներկայացնեն
նմանօրինակ հաստատութեանց և զբօսարաննե-
րու մթնոլորտէն:

Մտային զարգացումի այս վայրը, որ ան-
շուշտ մեծ ծառայութիւններ պիտի մատուցանէ
Աղեքսանդրիոյ հայ հասարակութեան, աւելի
փայլուն և յարատեւ վիճակ մը ունենալու հա-
մար միմիայն ժողովուրդի աջակցութենէն ու ա-
նոր յառաջդիմասէր ոգիէն կախում ունի: Տարի-
ներէ ի վեր զգալի եղած այս մեծ պակասը որ
բազմական զոհողութիւններով վերջապէս այսօր
իրականացած կը տեսնենք, սին փոփոխութեամբ չէ
որ անոր պահպանմանը սատարողներ պիտի ըլ-
լանք, այլ ձեռք ձեռքի տալով ջանալու ենք զայն
պահպանել, միշտ նախանձախնդիր ըլլալով մեր
համայնքին արժանապատուութեանը: Եւ իրա-
ւամբ փոփոխութեան արժանի են այն հաստատութեան
համար անխոշ աշխատողները, որոնց համար սր-
տի անհուն փոհունակութիւնի կը յայտնենք:

Տիգրան Երկաթ ժողովրդային Միութեան
ընթերցարանը բացուած է. ա'լ հոն յաճախելու եւրք
որովհետեւ մերն է այն:

ԷՕԶՊԵՔԻԷ ԹԱՏՐՈՆԻ ԱՐԿԱԾԸ

Գահիրէէն կը գրեն.

«Անցեալ շաբաթ գիշեր ֆէլէկեան երկու տաղան-
գաւոր բոյրերու թատերասումը իր երկրորդ ներկայա-
ցումը տուաւ Էօզպէքիէի թատրոնին մէջ. խաղն էր «Քոյր
Թէրէզա», որ բաւական յաջող անցաւ, սակայն միջա-
դէպ մը խաղը պահ մը խանգարեց: Ա. արարուածը
լինելով վրայ էր, երբ թատրոնին մէջ ահագին պոյ-
թիւն մը լսուեցաւ. թատերաբեմի ամբողջ լոյսերը մա-
րեցան ու ամենասոսկալի ցնցում մը տեղի ունեցաւ.
ամբողջ սրահը մութով լեցուեցաւ. այդ ցնցումէն յուշա-
րարի ծածկոցը վեր նետուելով՝ նուազածուներուն վը-
րայ ինկաւ. նոյն միջոցին թատերաբեմը գտնուող գե-
րակատարը լեզուապատառ ինքզինքնին ետեւի դռնէն հա-
ղիւ յաջողեցան պարտէզ նետել. ժողովուրդն ալ մա-
սամբ այնպէս ըրաւ:

Քառորդ ժամ վերջը ամեն բան կարգադրուեցաւ.
պայթովը կազմ է եղեր. միմեկ կազի պաշտօնէին ձեռ-
քերը այրեցան: Այս քարկածէն անմիջապէս շարունակ-
ուեցաւ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսո-ճարտնական պատերազմը

Շարժումն մէջ ստացուած հեռագիրները գրեթէ առանց բացառութեան կը հաստատեն ճարտնական զէնքերուն յաջողութիւնները:

Վլատիմիր Բոլշոյի ուղարկած մեծ փաստեր պատճառած չէ, եթէ Ալէքսիէֆի հեռագրածներուն հաւատանք. մինչդեռ ճարտնական ազգիւրէ հասած լուրերը բաւական ծանրակշիռ կը ներկայացնեն ուղարկածումին առթած փաստերը:

Բորթ—արթիւր միշտ կը ուղարկուի, երկու կողմին լուրերն ալ համաձայն են այս մասին: Մայրագոյն Արեւելքի ամենէն կարեւոր ռազմական նաւահանգիստն է Բորթ—արթիւր, որուն գլխուն անդագար կը տեղան ուղարկ կարկուտներ:

Մեծ հաւանականութիւն կայ թէ՛ ճարտնը պիտի յաջողի վերջապէս տէր դառնալ Բորթ—արթիւրի: Արդէն Քորէայէն դէպի Յալու կը դիմեն ճարտնի ցամաքային մեծ ուժերը, մօտերըս ընդհարումներ ալ տեղի ունեցած են. վերջին հեռագիրը մը կը ծանուցանէ թէ ճարտնական գունդերը գրաւած են Յալուի եղեւթը. Անքուքաղաքը և կը համարվուին Շէնկ—Շէնկ գետակին եղերքը:

Ալէքսիէֆ ծովակալը կը հեռագրէ թէ Նոյսի մօտ Շէնկ—Շէնկ գետին եղերքը Ռուսական գունդերը ճարտնական պահակազօրաց հետ ընդհարում մը ունեցած են. կըսէ՝ նաեւ թէ՛ ճարտնական հետեակազօրքը՝ թնդանօգնորով գրաւած է Բինկ—Յանկը, որմէ 50 մղոն հեռու կը գտնուի Անժու քաղաքը, դէպի հիւսիս, Սէուլէ Լիաո—Յանկ տանող մանչուրական մեծ ճամբուն վրայ, որ կը գտնուի Մանչուրիոյ ռուսական երկաթուղիին կայարանը:

Եթէ ճարտնցիք իրօք գրաւած են Անժուն, ալ 80 մղոն միայն հեռու կը գտնուին Վիթուէ և Սնդունկէ, (Յալուի վրայ) ուր բռնած են ռուսական զօրքերը, որոնց թիւը օրէ օր կաւելնայ, քանի որ երկաթուղիով ամեն օր 3-4000 զօրք կը թափին Յալուի հիւսիսային եղերքը. թերեւս այս պահուն ճարտնցիք դէմ առ դէմ կը գտնուին յառաջապահ պաշտօններուն հետ:

Զօրավար Քուրօբաթքինի յայտարարութեան նայելով՝ ռուսական ուժերը մայիսին հազիւ պիտի կրնան սկսիլ վճռական պատերազմը, որ, դարձեալ նոյն զօրավարին կարծիքով, մինչև Յուլիսի վերջը պիտի ջոխջոխած ըլլայ ճարտնի ուժերը:

Խնդիր է թէ՛ ճարտն մինչև այդ թուականը պիտի անդո՞րծ նստի ու սպասէ՞ որ Ռուսիա իր բոլոր ուժերը թափէ Յալուի երկայնքը:

Վաղուան անակնկալներուն մարդու խելք չի հասնիր. առ այժմ սա ստոյգ է թէ ճարտն մաշի չափ չեղած չէ իր ծրագրէն, ու կրնանք լսել այսօր ինքն է Քորէայի տէրը, վաղն ալ թերեւ տէրը պիտի դառնայ Բորթ արթիւրի:

ՏԵՄԵՐԱԿԻՐ

Աժանա Բոժոժիկ եւ Ընկ.

Քալիֆօռնիա

Վեց տարիէ ի վեր Ալքատախնամի սնտուկէն ամսական 120 դրշ. նպաստ ընդունող պեղանի տիկին Մ... յառաջիկայ Զատիկի առթիւ 10 ոսկինոց էջնաւ մատնի մը շինել տալու համար՝ երէկ խան-խալիլի ոսկերիչներէ մէկուն 5 ոսկի գումարո տուաւ:

Պրազիլիա

Օրիսրգ Ֆիֆի՝ (13 տարեկան) զտղու բաց նամակ մը գրելով իր պղտիկ եղբօրը յանձնած էր Միսիւ Զէվզէկիանոսեանին տանելու համար՝ որպէս զի փութացնէ ամիսներէ ի վեր իրեն խոտացած շիշ մը Վիլֆէլդէօնը և տուփ մը բուստան, բաց պղտիկը՝ ճոճբան պատահմամբ հայրը դիմաւորեց, որ կարճ հարցաքննութիւնէ մը վերջ տուն վերադառնալով, Միլֆէլդէօնին տնո՞ւ շիշ մը կծու տեսակէն քացախ նուիրեց օրիորդին:

Սուգ-էլ-նիլ

Տակաւին 40 դրշ. շաբաթական առնող Պ. Տ. Զէվզէկիանոսեան շաբաթէ մը ի վեր սկսած է մօրը գլուխը ուռեցնել՝ անոր աղամանդեայ օղերը իբր աւանդ վաշխառուի մը յանձնելով, ամական հարիւրին 5 տոկոսով ընելիք 7 ոսկի փոխառութեամբը Զաակուան ձեռք մը գոսխիւմ չինել տալու համար:

Աթթարին

Գրաբոս աղան՝ կիրակի գիշեր Աթթարինի գինետուններէ մէկուն մէջ մոռցեր էր իր դուխարկը, անշուշտ շատ զբաղեալ ըլլալուն պատճառաւ, և որովհետեւ ուրիշ գլխարկ չունէր, ուստի երկուշաբթի առտու կանուխ՝ գլուխը խաքաքնա մը կապած՝ նոյն գինետունը դիմեց դուխարկը առնելու, սակայն զինետունը տակաւին գոց գտնելուն՝ ստիպուեցաւ վազելով տուն վերադառնալ, ինքզինքը դուռ դրացեաց քահնաններու տարափին յանձնելով:

ԱՌ ՀԱՅՈՒՅԻՆ

Սէրը յաւէտ տնեղձ պահել շատ լաւ գիտեն
Պարթեւ հայք,
Օ՛ն ուրեմն, ընտրէ՛ կեանքիդ գիւցազունը
մի վէս հայկ:

Սիրոյ գգուանք եթէ պակսին, կը թառամի
զերթ վարդ ան,
Ուստի պահէ գուրգուրանօք համբոյրներով
քոյդ վարդան:

Գու սուրբ սիրոյդ ի յիշատակ կ'ուզես կո-
թող յարմար քար,
Էհ, այն ատեն պիտի ընտրես քեզի սիրա-
հար Մարգար:

Կեանքի դաժան փոթորիկէն զերծ մնալու
մի վահան,

Միայն կրնայ ըլլալ թուզես՝ զուարթ, կայ-
տառ այն վահան:

Կանցնին բաղդի սև վայրկեաններ, ուրա-
խութեան հեշտ գալուստ,
Հասնի ահա, դարձեալ գգուէ սրտին վրայ
քեզ Գալուստ:

Գուցէ օր մը մահն ալ ընէ իր սև և անհամ
բարձում,

Գու այն ատեն արտասուագին պիտ' սրգաս
քոյդ համբարձում:

Թէ կայ մէկը որ քեզ սիրէ, հոգւոյն, սըր-
տին է՛ն խորէն,

Արդեօք պիտի ըսես իրեն. «սիրեմ գրեզ
ո՛վ Խորէն»:

Մինչ մրմնջէ անդին մէկը, ձայն մը կուգայ
իմ ներսէս,

«Որ քեզ պաշտեմ, բայց դու աւա՛ղ, չպիտ'
սիրես հէգ ներսէս»:

Վերջապէս, շուտ ընտրէ՛ քեզի, ծեր, պա-
տանի կամ մանուկ,

Մի ամուսին՝ պաշտող, գգուող, ինչպէս որ
ես եմ Մանուկ:

Ռուսչուք

ՄԱՆ-ԹԱՇ

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Գահիրէ Ապտինի գարագօյին դէմը, Սփինքս
գեղարանին կից, և Շարա Մուհամմետ ալիաթը-
ֆէթ—էլ—էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար
(միկէլի) եւ դրուագեալ զարդանկեր:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՁՐ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ ՄԸ

Շատ մը մարդիկ Զատիկին Երուսաղէմ դըռ-
նուիլ կ'ուզեն, ես ալ Վառնա. պիտի հարցնէք
թէ ինչո՞ւ:

Երբ ծանօթ մեր արիւնի թուականին հոն
ինկայ՝ ու մեծ պահքը վրայ հասաւ, միտքս դը-
րի Զատիկին խոստովանիլ և Ս. Խորհուրդոյն մաս-
նակցիլ:

Օրերը կը մօտենային. աւագ շաբաթը հա-
սաւ, ու ես պատրաստուեցայ խոստովանանքի.
սակայն մեծ ճնշում մը կար վրաս, ի՞նչպէս ը-
նել մեղքերուս մանրամասնութիւնքը, ի՞նչպէս
թուել զանոնք, որ կողմէն սկսիլ և որով վեր-
ջացնել. Մինչև այն օրը, գիշերները ինքնիրենս
խոստովանութեան փորձը կ'ընէի ու արիւն քըր-
տինք կը մոտէի մինչեւ որ քունս տանէր: Հիմա
պիտի ըսէք թէ կերակայ թէ գուն ալ շատ մեղք
գործած ես. չէ՛, բայց խոստովանութիւնը՝, դժ-
ուար, շատ դժուար կուգար ինծի, բնութիւնս
այդպէս կը տրամադրէ. օրինակի համար, տա-
րի մըն է որ աղջիկ մը կը սիրեմ, ամեն օր կը
տեսնեմ, բայց չեմ կրնար իրեն յայտնել. խոս-
տովանիլ թէ զինքը կը սիրեմ. վերջապէս վայր-
կեանը հասած էր. Տէր պապան հինգ տասը հո-
գիներու «Մեղայն» կարդաց, որոնց հետ ես ալ
ծնկոտջող՝ կ'ունկնդրէի ու «Մեղայ Աստուծոյ» կը
խառնէի անոնց սրտաբուլիս բարբառին, միան-
գամայն մեղքերու թուումէն բաւեր կ'ուրա-
ցնէի, քիչ մը վերջ առանձին գործածելու հա-
մար:

Եւ ահա կարգը եկաւ ինծի. պաշտօնական
ձեւակերպութեամբ մը տեղաւարտեցանք տէրպա-
պին առջև, ու տեսակ մը անձկութեամբ կը
պատրաստուէի մեղացս թուումն ընել՝ գոցի պէս
երբ քահանան սա հարցումը ըրաւ.

—Օրհնած, կարդուած ես թէ ամուրի:

—Ամուրի եմ, պատասխանեցի, բայց վայր-
կեանական այդ հարցումին մէջ ի՞նչ նպաստաւոր
բան մը ըլլալը կարծես զգացի:

—Ողորմեցի քեզ մարդասէրն Աստուած և
թողութիւն շնորհեցէ՛ն եւայլն ըսաւ ու ձեռքը
երկնցուց, զոր պագնելով ու այսչափ գիւրին
բան մը ինծի այնչափ չարչարած ըլլալը տըխ-
մարութեանս տալով հեռացայ, մտածելով թէ՛
եթէ կարգուած եմ ըսէի, ի՞նչ պիտի ընէր:

Զատիկը կուգայ, Վառնա պիտի երթամ...
խոստովանանքի համար:

ԱՇԽԱՐՀ

Օգտակար խիստ մը

Թուալէթի սպունգները մաքրել

Թուալէթի սպունգները երբ աղտոտին՝ գէշ հոտ մը կ'արձակեն. զանոնք մարրելը շատ դիւրին է. Սպունգը ամանի մը մէջ դիր. վրան լի մոն քամէ. նոյն լիմոնին կեղեւները կտրտելով սպունգին վրայ ձգէ. վրան եռացած ջուր լեցուր և այսպէս 24 ժամ թող որ հանդարտ մնայ. Յետոյ նոյն ջրով մի քանի անգամ սպունգը լուա, որ իւր բնական մաքրութիւնը կը ստանայ:

Փոքր Թղթասար

Տ. Մ. Գ. Թանթա. — Գունաւոր հայկական քառթ-բօսթերը 10 տեսակ են. 12 հատին գինըն է 2 դահեկան ողջ, բօսթի ծախքով 100 փարայ, Դրամի փոխարէն նամակագրոյժ ալ կընդունուի:

Բսծոմիկի պատառխանը՝ Արշալոյսի «ե՛րբ պիտի տեսնուինք»ին.

— Հիմա՝ «տեսնուինք»ին մոզաքան առաջնորդը առած է, անոր դէմ տեսնուինք...

Ծ Ի Ծ Ա Ղ

Թաղուած դէմքերէն կամ դէպքերէն

Անգամ մը Պոլսոյ մէջ Ակնցիին մէկը իր սպասաւորին 5 զրչ. կստայ որ երթայ իրիկուան կերակուրի պատրաստութիւն տեսնէ, ու անոր վերագարձին կը հարցնէ.

— Մէնչո՛ւկ, ի՞նչ առիր.

— Հինգ զրուշը տալով օխա մը պատուական ձուկ և կանանչեղէն առի:

— Ծօ ի՞նչ ես ըրեր, կը պոռայ ակնցին բարկացած, էրթայիք էմին էօնիւին բազարը, թուիս կէօրէ բաթլիճանները երկուական բարայի կուտան, անոնցմէ առնէիր ուր՝ օխտը չէջիւտ կերակուր կուլի. տօլման կուլի, սիլքմէն կուլի, իմամ պայլըտին կուլի, մուստգգան կուլի, դարնը եարուխը կուլի, քէպապը կուլի, հաւկիթով տապկածը կուլի. դունդնացիք ալուճ մի ձուկին հինգ զրուշ տուիր և կար ուր՝ հիչ բան մի չիլիր:

Սպասաւորը. — Հիտապիդ մէջ աճէլէյով բան մը մոռցար, աղա, բաթլիճանին խապուխն ալ՝ չօճուխիդ բանթալօնին չըսուելիք տեղին եամա կուլի...

Ակնայ առաջնորդներէն կախկոպոս մը, օր մը եկեղեցիէն առաջնորդարան ելած միջոցին՝ մէկը իրեն կը ձայնէ.

— Հայր սուրբ, հայր սուրբ, իմ տղուս համար ինչո՞ւ իզիմնաւնէ չէք խտար կարգուելու՝ աղջիկը մեղօք է ըսելով. ես ըսիմ դուն համրէ, տղուս պորտը մէկ, մօրը պորտը երկուք, հօրը պորտը իրեք, աղջկան պորտը չորս, անոր մօրը պորտը հինգ, հօրը պորտը վեց, իրար ալ առնեն նը կուլի օխտը, իշթէ թամամ է հիտապը. ինչո՞ւ համար տահա մանի կուլիք քի խըսըմ է, մեղօք է տէյի. ի՞նչ է, փարա ելլալիք տեղ չէ, հա՞:

Կերևի թէ սրբազանը համոզուեր է այս ճիւղահամարին, (Բոժ. — Մեր առաջնորդին պէս) ու հրամանագիրը տուեր է.

Անգամ մը Ակնցի քահանային մէկը հեռեկալ ծանուցումը ըրեր է.

— Օրհնեալ ժողովուրդ, Սեթենց սեթիլն է կորսուեր, ո՞վ ուր գտեր է նը՝ թող բերէ ուր տիրուն տանք. մազալլահ ուր չի բերէ նը՝ անդիի աշխարքը դատաստանին օրը՝ ան սիթիլը չիլիլինիվար տի կախին ու խոյախ պայիլնի վար (պառիվար երկայն ճամբայ) լանկուռ, լունկուռ տիքչին. Տէ՛ր ողորմեսցէ:

Ակնցի ամիրային մ.կը երեկոյթի մը մէջ գտնուած ժամանակ, սպասաւորը կուգայ աւետել իրեն թէ՛ Աչքդ լոյս, աղա. խաթունը խալըսեցաւ:

— Մա՞նչ է մի աղջիկ, կը հարցնէ ամիրան, ուրախութեամբ.

— Մանչ ալ կայ, աղջիկ ալ կայ.

— Զըսե՛ս երկուք է, կըսէ ամիրան աւելի ուրախացած.

— Երկուք ալ կայ երեք ալ կայ. կը պատասխանէ ծառան.

— Ծօ՛, չըսիս սւր մեր կնիկը չան ճընն է եւր, կը պոռայ ամիրան սաստիկ զայրանալով այս անգամ.

Աշխարհ

Լ Է Թ Ա Յ Ի Ֆ

Պիր ալօգաթ իլէ քէօյլիւ.

— Կէօյլիւն ալտըն, եահու, տալանը դա-
զանտըմ.

— Էօյլէ իսէ հէման իսթինաֆ իթմէլիօին.

— Նէօ սէօյլէյօրսուն, գազանըմը տալա
իսթինաֆ օլուր մու.

— Օլուր. օլուր. իսթինաֆ մահքէմէսի տէ
վազըթ կէլմէտէն. հազըլ օլտուլուսու թաուտիդ
իթմէլի քի. պիր ալ վազըթ կէլտիքտէն սօնրա
սէվինճիմ գարնըմտա գալմասըն.

Իքի գօնչու գատընլար.

— Վերոնիրա աուտու, պիր գամպուրուն
օլալտը տա՝ բադար աղշամը Էօլպէքիյէ պահ-
չէսինտէ պուլունմալլըյուն.

— Սուս օլ, սուս, խըյանէթ Բէթրիյէ օ
գատար եալլարտըմ քի պէնի չըդարտէյի, չը-
գարմատը. թանըտըգլարտան քիմէր վարըտը.

— Եալընը պէնիմ թանըտըգլարըմ տուր
քի սէօյլէյիմ. Ա. իկէր, մատամ Գառլինին թա-
գըմը, Գօզմինին էլլիթիսի, մատամ Պըրթ, Կո-
միլասլար, Բաւլաքիլէր, Ալանլար, Սաթանլար.

— Քա վախ, բէք չըլրթըմը կէճէ իմիշ
տէ պուլունմամըլըմ.

— Բէք չօճուգլուգ էթմիշին. պէն սէնին
եէրինտէ օլալտըմ, եա Ալանլարըն թագըմըլա
եա Սաթանլարլա գալգար կէլիւ իտիմ.

— Տօլրուսունու իսթէրսէն. պէնիմ տէ ֆիք-
րիմտէն կէլտի տմա՝ թաճիլիք վէրիւրիմ տէյի
սալիլ էթտիմ. եօզսա՝ Ալանլարըլա արամըլ բէք
էյի աիր, բէք էյի կէօրիւշիւրիլ. Բ.

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Հրատարակուեցաւ Փետրվարի թիւը հետեւ-
եալ բովանդակութեամբ.

1. Մերժումը Սէր. Պոլսական կեանքի դրուագ-
ներ. գրած է. Պ. Ե. Սրմաքէյիսանլեան.
2. Տը-
րսմներ եւ Կաղսնիք Հաւաստագրութեան. հեղի-
նակութիւն Պ. Պ. Մառիօյի եւ Լօնէյի. 3. Խորհր-
դաւոր դաս մը. հեղ. Փօրթիւնէ ալի Պօսկապէի.
- Տարեկան բաժնեգրին է Եգիպտոսի համար
6 ֆր. Դիմել հետեւեալ հասցէին.

Օմնիկ Բարսեղեան.

Էմքոխլըրի Օրիէնրալ, Վառնա (Պոլիսի)

ՉՄԻԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ԵՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԸՏԸՏԻՄԵԱՆ

Թրիպունալի ետին՝ հօթէլ սէն ժօրթի կից.

Ամեն տեսակ լաւ նպատեղեցներէ զաւ. Չմիւ-
նիայեն քերում ընտիր օղի, գինի, մէք, կարագ,
անառ, տոփերով գոնետրպներ, պաստաս անո-
շեղէն եւ օշորանկեր՝ նարինջ, բալ, բարմ ընկոյզ
եւ յում (գրգըրգ). նաեւ Աշաշեհիրի հանֆային
շուրք որ դժուարամարտութիւնը կը դարմանէ.

Սոյն վաճառատունը կը խոստանայ իրեն դի-
մող յաճախորդները գոնացնել անխարդախ ապ-
րանքներով եւ զինքնա չափաւորութեամբ.

Մեր այս ըսածը հաստատելու համար այցե-
լութիւն մը քաւակաւ է.

Մեծաքանակ ու փոքրաքանակ յանձնարա-
ւորութիւնք անմիջապէս կը կատարուին.

3

ՏՕՔԻՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքապետ
Էշխանիւն

Այս անգամ Աղեքսանդրիա հաստատում չի-
նելով, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հա-
տարակոթեան, որ ամեն օր առաւօտները ժամը
9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կըն-
դունի իր ասն մէջ. Աթթարին փողոց թիւ 31,
Սգիթիքին դէմը, երկրորդ յարկ.

Ներքին եւ փրաքուժական հիւանդութիւննե-
րու հետ, կը դարմանէ նաեւ երախաներու հիւան-
դութիւնները, 15 արոյոյ մասնագիտական փորձա-
նորութեամբ.

Յաջող կերպով կը դարմանէ նաեւ Աճիօնա-
մոլութիւնը եւ Մորժիւնաւորութիւնը, որոնց դեմ
հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ
Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած
են այդ մոլորութիւնը.

6

ԿՈՒԻՏՈՆ ԼՈՒԾ ԻՆԵԱՆ

Նոր Բաղդիքի պաշկերագար, Փրանսահայ
Երկու հասր՝ 1874 մեծադիր երեսներով.

Ազդ. — Մատենագիրն փոփաքելով որ իր երկասի-
րութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իր նպատակն է ամենին չըհիւ, այլ վնա-
սով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորնե-
րը ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն.

Դիմել հեղինակին հետեւեալ հասցէով.

M. G. DE LUSIGNAN

108. Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ.